

ԼՈՒՄԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՊՀ-ի ընդհանուր հոգեբանության ամբիոնի ղոցենստ,
կենսաբանական գիտությունների թեկնածու

ՏԱԹԵՎ ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ-ի ընդհանուր հոգեբանության ամբիոնի մագիստրոս

ԱՐՏԱԿ ՂՈՒՅՑԱՆ

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի
իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի ուսումնական մասի պետ

**ՊՐՈԲԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ
ԴԱՏԱՊԱՏՅԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՋՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ուսումնասիրված է ՀՀ-ում քրեակատարողական հիմնարկներում իրենց պատիժը կրող դատապարտյալների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: Ըստ ներկայում գործող չափորշիչների ընտրանքը բաժանվել է երկու խմբի: Անցկացվել է սոցիալ-հոգեբանական գործոնների միջխմբային համեմատական վերլուծություն: Հայտնարերվել են հավաստի միջխմբային տարրերություններ, ըստ սոցիալական առանձնահատկությունների, ինչպես նաև՝ ըստ հոգեբանական գործոնների, մասնավորապես, ըստ էղոցներիզմի, ինքնավերահսկման և ինքնազնահատականի:

Հիմնարարեր՝ դատապարայալներ, պրոբացիոն ծառայություն, ազրեսիվություն, կարկանդառություն, հաղորդակցում, ինքնավերահսկում, էղոցներիզմ:

Սեր երկրում դեռևս 90-ական թվականներից սկիզբ առած դատաիրավական բարեփոխումների շրջանակներում տեղի ունեցան մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնք իրենց ազդեցությունն ունեցան ՀՀ քրեական քաղաքականության վրա ընդհանրապես, և պատճենական քաղաքականության՝ մասնավորապես: Արդարադատության դորոտում մեկնարկած և մինչև օրս շարունակվող բարեփոխումները նպատակ ունեն ստեղծելու մի պետություն, որը հիմնված կլինի օրենքի գերակայության, ժողովրդական արժեքների, Մարդու իրավունքների պաշտպանության վրա [2-7]: Արդարադատության ողջ համակարգում իրականացվող բարեփոխումները պետք է ենթադրեն ազատազրկման ավանդական գաղափարախոսությունից անցում կատարել վերասցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսությանը, որի էությունը ազատազրկման այլընտրանքային միջոցներով պատժի նպատակներին հասնելն է՝ պրոբացիոն ծառայությունների գործունեության արդյունքում: Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է ազատազրկման ավանդական գաղափարախոսությունից վերականգնողական արդարադատության անցման ուղին՝ կարեռելով ազատազրկման այլընտրանք հանդիսացող պատժատեսակների կիրառման հնարավորությունների ստեղծումն ու ընդլայնումը [3-5]:

Այս առումով անփոխարինելի նշանակություն է ունենում Պրոբացիոն ծառայության սոցիալական ազդեցությունը, որի շրջանակներում հասրակության համար նվազ ոխսկային գնահատված անձիքի իրենց պատասխանատվությունն ու պատի-

ժը կրեն հասարակությունում գերծ մնալով քրեակատարողական հիմնարկների բացասական մի շարք հետևանքներից: Ներկայում քրեական իրավունքը ավելի շատ ուշադրություն է սկսել դարձել հանցագործություն կատարած անձանց սոցիալական վերաբենեգրմանը և հանցագործությունների դեմ պայքարող հասովկ կանխարգելիչ միջոցառումներին: Արդյունքում ձևավորվել են նոր, այնպիսի պատժամիջոցներ, ինչպիսիք են՝ գրավը, տնային կալանքը, որոց իրավունքների սահմանափակումը և այլն: Մինչ օրս այլընտրանքային պատժի իրավունքը սահմանվել է նրանց կատարած հանցագործության ծանրությունվ, ինչը դեռ բավարար պայման չէ, ախտորոշելու համար, արդյո՞ք հանցանք կատարած անձնավորությունը նորից կդիմի հանցանքին, թե՝ ոչ:

Հիմնվելով, վերոնշյալի վրա, մենք ենթադրեցինք, որ պրոբացիոն ծառայության ներդրման արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն պատժի ծանրությամբ, այլ նաև դատապարտյալի հոգեբանական առանձնահատկություններով:

Հետազոտության նպատակն է կատարել հոգեբանական գործոնների ձևավորվածության և արտահայտվածության ցուցանիշների համեմատական վերլուծություն՝ ըստ համապատասխան չափորշիչների պրոբացիոն ծառայությանը ենթակա և ոչ ենթակա դատապարտյալների մոտ, ինչպես նաև դուրս բերել պրոբացիոն ծառայությանը ենթակա դատապարտյալների հոգեբանական դիմանկարը:

Նպատակին հասնելու համար առաջարկվեցին հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել դատապարտյալների հոգե-

բանական առանձնահատկությունները,

• կազմել պրոբացիոն ծառայությանը ենթակա և ոչ ենթակա անդամների հոգեբանական դիմանկարները:

Հետազոտության օրյնկան է պրոբացիոն ծառայության հոգեբանական բաղադրիչը:

Հետազոտության առարկան պրոբացիոն ծառայության ենթակա և ոչ ենթակա դատապարտյալների հոգեբանական առանձնահատկությունները:

Հետազոտությանը մասնակցել են 30 ՀՀ դատապարտյալներ, որոնք, ծանրութանալով հետազոտության նպատակի և ընթացքի հետ, տվել են իրենց գրավոր կամ բանավոր համաձայնությունը: Հետազոտության ընտրանքը ըստ առկա չափորոշիչների բաժանվել է երկու խմբի՝ նվազագույն շեմ սահմանված 70 միավորը գերազանցող դատապարտյալները ներառվել են 1-ին խմբի մեջ, ովքեր ենթակա չեն պայմանական վաղաժամկետ ազտվելուն (34%), իսկ 2-րդ խմբի մեջ ընդգրկվել են 65 միավորը չգերազանցող դատապարտյալներ, այսինքն ովքեր ենթակա են պայմանական վաղաժամկետ ազատվելուն դիմելու (66%):

Հետազոտվողների հոգեբանական դիմանկարի պարզաբանման նպատակով կիրառել ենք անկետավորման, թեստավորման և զրույցի մեթոդները:

Թեստավորման մեթոդի շրջանակներում կիրառել ենք հետևյալ մեթոդիկաները՝

1. Հ. Այզենկի «Հոգեկան վիճակների ինքնազնահատման մեթոդիկա»,

2. Ինքնազնահատականի մակարդակի ախտորոշման մեթոդիկա՝ ըստ Կազանցևայի,

3. Էզոցենտրիկ զրույցությունների թեստ,

4. Հաղորդակցական և կազմակերպչական հմտություններ,

5. Կամային ինքնավերահսկման ախտորոշում:

Հետազոտության արդյունքները և դրանց վերլուծությունը. Հետազոտվողների 55%-ը ամուսնացած էին, 5%-ը՝ ամուրի, իսկ 40%-ը ամուսնալուծված էին:

Դատապարտյալների հոգեբանական գործուների համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ 1-ին խմբի հարցվածների 15.5%-ը ընտանիքի անդամներից բացի ոչ մեկի հետ չի շփվում: Այս ցուցանիշը խոսում է այն մասին, որ ռեալապարհայի համար անհրաժեշտ դրական սոցիալական կապերը բացակայում են: 2-րդ խմբի մոտ այլ պատկեր է ստացվել: հարցվածների 35.5%-ը նշել են, որ շփվում են ընտանիքի անդամների հետ: Հետևաբար, նրանց մոտ ռեալապարհայի համար կան անհրաժեշտ սոցիալական կապեր:

Գրեթե նույն տվյալներն ենք նաև ստացել այն հարցումների արդյունքից, թե արդյո՞ք ստանում են նյութական աջակցություն իրենց ընտանիքի անդամներից: 1-ին խմբի անդամների միայն 15%-ն է ստանում նյութական աջակցության, իսկ 2-րդ խմ-

բի 30%-ը պատասխանել են, որ ստանում են նյութական աջակցություն: Հարցված անձանց զգալի մասը դեռևս անշափահաս տարիքից հակահասարակական կամ հանցավոր վարք դրսերելու փորձ են ունեցել: Այս առումով, հատկանշական է, որ անշափահաս տարիքում ոստիկանությունում հաշվառված է եղել 1-ին խմբի հարցվածների 17%-ը, իսկ 2-րդ խմբում՝ 25%-ը:

Աշխատանք և կրթություն ստանալու հնարավորությունների բացակայությունն ընդգծվել է որպես հանցագործություն կատարելու առաջնային պատճառներից մեկը, 2-րդ խմբի կրթական մակարդակը ի տարրերություն 1-ին խմբի՝ ավելի բարձր էր: Սակայն նրանք ել նշում էին, որ, թեև բարձրագույն կրթություն ունեն, սակայն Հայատանում իրենց մասնագիտությունները բնավեկամտաբեր չեն, և դա էլ նշվել է հանցանք կատարելու հիմնական պատճառներից մեկը: Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ բնակչության 9%-ն ունի հիմնական կրթություն, 40%-ը՝ միջնակարգ, 20%-ը՝ բարձրագույն, 15 %-ը՝ միջին մասնագիտական:

Կենսական կարիքները և հանցածին գործուները, այդ թվում՝ աղքատությունը, մասնագիտական որակավորման բացակայությունը, հակահասարակական վարք դրսերելը, շրջապատը և միջավայրը, ընտանեկան վիճակը, անձնային որակները, թմրանոլությունն ու խաղանոլությունը նպաստում են հանցանք կատարելուն, որի պատճառով դատվածության առկայության հետևանքով տվյալ անձինք դառնում են անմրցունակ աշխատանքային շուկայում, փոխվում են անձնային որակները, դառնում են հանցավոր ենթամշակույթի կրողները, անբարենպատ են դարձնում ընտանեկան վիճակը, ինչպես նաև՝ փոխվում է հասարակական վերաբերմունքը և տվյալ անձինք սկսում են կրել տարրեր «պիտակներ»:

Ներկայացված տվյալները փաստում են ազատազրկման էական բացասական ազդեցության մասին հարցվածների կյանքի բոլոր ոլորտների վրա, ուստի պրոբացիոն ծառայության ներդրումը կնպաստի աղեկված սոցիալականացմանը՝ կանխելով դատապարտված անձի ինտեգրվելը «սպեցիֆիկ» ենթամշակույթին:

Սակայն, պրոբացիոն ծառայությունից օգտվելը պետք է պայմանավորվի ոչ միայն կատարած հանցանքի ծանրությունով և սոցիալական առանձնահատկություններով, այլ նաև հոգեբանական առանձնահատկություններով:

Ազատազրկված անձանց հետ անցկացված «ինչը կարող է հանցանք կատարելուց հետ պահել» հարցազրույցների վերջունությունը ցույց է տալիս, որ նրանց մեծ մասը նյութական դժվարությունը և աղքատությունը համարում են հանցագործություն կատարելու հիմնական պատճառ: Այսինքն, եթե չկան նյութական դժվարությունուն իրենց հանցագործության դիմումը ունիկը նվազում է: Երկրորդ տեղում է սեփական արարթների գիտակցումը, նման պա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տասխաններ տվել են համապատասխանաբար 20%-ը և 33.8%-ը: Հարցվածները մեկնարանում էին, որ չեն հասկացել, որ հանցանք են գործում: Ինպես երեսում է պատասխաններից՝ ազատության գնահատումը կարող էր հետ պահել հանցանք կատարելուց, հատկապես 2-րդ խմբի մասնակիցների մոտ: Նաև նշվել էր ընտանիքի դերը հանցանքից հետ պահելու հանգամանքում և կրկին գերակշռում էր 2-րդ խմբի պատասխաններում (1-ին խմբում՝ 17.8%, 2-րդ խմբում՝ 21.8%):

Հարցվածների պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցագործություն կատարելու դեպքում շրջապատի ազդեցությունն ավելի ուժեղ է եղել հատկապես 1-ին խմբի անդամների մոտ: Շրջապատի ազդեցության մասին խոսելիս հարկ է նշել, որ հարցված անձինք այն մատնանշել են որպես իրենց կողմից հանցագործություն կատարելուն դրդող գործոն: 1-ին խմբի հարցվածների 53%-ը նշել էին, որ իրենք ընտրել են այդ ենթամշակույթի կյանքը և ակտել են այդ ենթամշակույթին բնորոշ օրենքներով ու կանոններով ապրել, որից ելնելով էլ հայտնվել են քրեակատարողական հիմնարկում, սակայն որևէ բան փոխել են այն շեմանում: Պետական օրենքներուն ընդունում են 22%-ը, իսկ մնացած 25%-ը չեն ընդունում որևէ տեսակի օրենքները: Իսկ 2-րդ խմբում ստացել ենք այլ պատկեր: Հետազոտվողների 36%-ը պատասխանել են, որ չեն առաջնորդվում տվյալ ենթամշակույթի օրենքներով, այլ ընդունում են պետական օրենքները: 24%-ը ընդունում են «Ենթամշակույթի» օրենքները, իսկ մնացած 40%-ը չեն ընդունում օրենքները: Այս ցուցանիշները վկայում են ազատազրկման վայրում գտնվող անձանց վրա այդ ենթամշակույթի ազդեցության վառ վկայության մասին՝ հատկապես 1-ին խմբի դատապարտյաների մոտ:

Հատկանշական է, որ հարցվածների հիմնական մասը ընտանիքի անդամների հետ հարաբերությունները գնահատել են որպես լավ: Սույն հետազոտության շրջանակներում դատապարտյալների ընտանիքի անդամների հետ հարցազրույցներ նախատեսված չեն եղել, հետևաբար, հնարավոր չի եղել ճշգրտել, թե, արդյո՞ք ընտանիքի անդամները հարաբերությունները նույն կերպ են գնահատում: Բացարելով ընտանիքի հետ վատ հարաբերությունները՝ հարցվածները նշել են հետևյալ պատճառները.


- ամուսնալուծություն,
- վեճեր,
- երեխաները իրենց լրված են զգում,
- ընտանիքը մեղադրում է դատապարտյալին անընդհատ նյութական աջակցություն պահանջելու մեջ:

Սակայն, համապատասխանաբար 1-ին խմբում 40%-ը, 2-րդ խմբում 45%-ը ընտանիքի հետ հարաբերությունները գնահատել են որպես լավ: 2-րդ խմբի հետազոտվողները նաև նշել են, որ իրենք նաև նյութական աջակցություն են ստանում իրենց

ընտանիքից (40%), իսկ 1-ին խմբում այլ ցուցանիշ է: Նրանց 19%-ը նշեցին, որ ընտանիքի հետ լավ հարաբերությունները սահմանափակվում են միայն հեռախոսային գրույցներով, նրանք չեն ունենում տեսակցություններ հարազատների հետ և ոչ մի օգնություն չեն ստանում, ինչը դժվարեցնում է քրեակատարողական հիմնարկում իրենց կարիքները հոգալու խնդիրը: Այստեղից էլ նրանք դասակարգվում են ավելի ցածր սոցիալական խավերի շարքին և դրանով իսկ ստանում են նոր կարգավիճակ:


Ինչպես արդեն նշել էին, մեր դատապարտյալների հոգեբանական առանձնահատկությունների ախտորոշման համար կիրառվել է թեստերի փարեր, որի արդյունքները ներկայացված են ստորև:

Այսպես, օրինակ, ըստ Հ. Այզենկի «Հոգեկան վիճակների ինքնազնահատման թեստի» բացահայտվել է, որ 1-ին խմբի հետազոտվողների 27% բնութագրվում էին բարձր տագնապայնությամբ, 13%-ը՝ ազդեսիկությամբ, 27%-ը՝ կարկամվածությամբ, 33%-ը՝ ֆրուստրացիայով: Այն դեպքում, եթե 2-րդ խմբի հետազոտվողների մոտ գրանցվել էր հետևյալ պատկերը՝ բարձր տագնապայնությամբ օժտված էին հետազոտվողների 22%-ը, ազդեսիկությամբ՝ 17%-ը, ֆրուստրացիայով՝ 31%-ը և կարկամվածությամբ՝ 30%-ը (տե՛ս նկ.1):



Նկ. 1. Հոգեկան վիճակների ինքնազնահատման ցուցանիշների արտահայտվածությունը հետազոտվող խմբերում:


Ըստ Ա. Կազանցեայի ինքնազնահատականի թեստի հայտնաբերվել է, որ 1-ին խմբի հետազոտվողների 40%-ը բնութագրվում էին ցածր ինքնազնահատականով, 53%-ը միջին, իսկ 7%-ը՝ բարձր մակարդակով: Միևնույն ժամանակ 2-րդ խմբի հետազոտվողների 15%-ը բնութագրվում էին ցածր ինքնազնահատականով, 80%-ը՝ միջին, իսկ 5%-ը՝ բարձր մակարդակով (տե՛ս նկ.2):



Նկ. 2. Ինքնազնահատականի մակարդակի տոկոսային արտահայտվածությունը հետազոտվող խմբերում:

Ըստ Էղոցենարդիկ զուգորդությունների թեստի հայտնաբերվել է, որ 1-ին խմբի հետազոտվողների

40%-ը բնորդագրվում են էզոցենտրիզմի ցածր մակարդակով, 50%-ը միջին, 10%-ը բարձր: 2-րդ խմբի հետազոտվողների մեծամասնությունը բնորդագրվում էր էզոցենտրիզմի միջին մակարդակով (75%), իսկ ցածր և բարձր մակարդակներով համապատասխանաբար՝ 13% և 12% (տե՛ս նկ.3):



Նկար 3. Էզոցենտրիզմի մակարդակի տոկոսային արտահայտվածությունը հետազոտվող խմբերում:

Ըստ հաղորդակցման և կազմակերպչական ընդունակությունների թեստի պարզվել է, որ երկու հետազոտվող խմբերում էլ մեծամասնությունը բնորդագրվում էր նշված ընդունակությունների միջին մակարդակով: Նմանատիպ պատկեր գրանցվել է նաև ըստ կամային ինքնավերահսկման ախտորոշման մերոդիկայի՝ երկու հետազոտվող խմբերում էլ ինքնատիրապետման և համառության միջին մակարդակով բնորդագրվող անձինք գերակշռում էին: Միևնույն ժամանակ 1-ին խմբի հետազոտվողների 35 % բնորդագրվում էր ինքնավերահսկման ցածր մակարդակով:

Այսպիսով, ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ դատապարտյալին վաղաժամկետ պայմանական ազատման կամ մեղադրային այլընտրանքային պատճի կիրառման ժամանակ միայն սոցիալական և իրավական մերոդներով առաջնորդվելը բավարար չի արդյունավետությունը ապահովելու համար: Ինչպես ցույց տվեցին միջինմքային համեմատական տվյալները դատապարտյալների հոգերանական առանձնահատկությունների վերաբերյալ, պրոբացիոն ծառայության ոչ ենթակա դատապարտյալները բնորդագրվում էին ցածր ինքնազնահատականությունով, դեցենտրացիայի ձևակորդվածության ցածր մակարդակով, ինչպես նաև՝ ինքնավերահսկման ցածր մակարդակով: Միևնույն ժամանակ, ըստ հոգեկան վիճակների՝ նշանակալի տարբերություններ չեն գրանցվել: Ստացված տվյալները վկայում են այն մասին, որ պրոբացիոն ծառայությանը ենթակա դատապարտյալների, իրենց պատիժը քրեակատարողական իիմնարկներում չկրելու դեպքում, կրկնահանցագրծությունների կատարման հավանականությունը կնվազի: Միևնույն ժամանակ, մեր կողմից ստացված տվյալները փաստում են ներկայում առկա չափորոշչներում հոգերանական և հոգեֆիզիոլոգիական բաղկացուցչի ներառման անհրաժեշտության մասին:

Անփոփելով վերոնշյալը, կարելի է եզրակացնել, որ ըստ հետազոտության վերլուծության՝ այլընտրանքային պատիժների կիրառությունը

պրոբացիոն ծառայության ներդնումը անհրաժեշտ է ընդլայնել, մանավանդ առաջին անգամ հանցագործություն կատարելու դեպքում, քանի որ դրանք դրական ազդեցություն ունեն թե՛ դաստիարակչական, թե՛ զավող առումներով: Այս պատժամիջոցը պետք է զուգորդվի իրավախախտի հետ, պրոբացիոն ծառայության մասնագետների՝ հոգերան, սոցիալական աշխատող, սոցիալական մանկավարժ, իրավաբան և այլն նպատակային աշխատանքով: Պրոբացիոն ծառայությունը կնպաստի աղեկվատ սոցիալականացմանը՝ կանխելով դատապարտված անձի ինտեգրվելը քրեակատարողան իիմնարկների ենթամշակույթին: Կարելի է նշել նաև այն հանգամանքը, որ դատապարտյալները մշտապես վայրքարում են այլընտրանքային պատժի նշանակման համար ու այդ ժամանակահատվածում գիտակցված փոխվում են նրանց վարքային դրսուրումները, սակայն, որը չի խոսում առանցքային փոփոխությունների մասին: Պրոբացիոն ծառայություններից օգտելով կարևոր նախապայման է հանդիսանում հոգերանական և հոգեֆիզիոլոգիական դիմանկարի համապատասխանությունը տվյալ պատժամիջոցին:

Ինչպես ցույց տվեցին մեր հետազոտություններում ստացված տվյալները, ազատմական բողոքությունը բողոքում է բացասական ազդեցություն դատապարտյալների կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա, մասնավորապես, այն նպաստում է անձի և նրա լնտանիքի հարաբերությունների վատքարացմանը, առողջական վիճակի վատքարացմանը՝ ոչ բավարար բժշկական աջակցության և ոչ առողջ բարոյահոգերանական մքնուրուտի պատճառով: Բացի այդ, շրջապատի բացասական ազդեցությունը ավելի խիստ է արտահայտվում քրեակատարողական հիմնարկներում: Նշված փոփոխությունները ի վերջո հանգեցնում են կրկնահանցագործությունների քանակի ավելացմանը, քանի որ դատապարտյալները երկար տարիներ անցկացնելով այդ սոցիոմումից, ազատումից հետո դժվար են հարմարվություն կրենց համար արդեն նոր դարձած սոցիոմին, և որպես կանոն, շատ արագ նորից վերադառնում են քրեակատարողական հիմնարկներ [1]: Մեր իրականության մեջ դատապարտումը հիմնանկանում ուղեկցվում է դատապարտյալի մեկուսացմամբ, առանց հաշվի առնելու, որ ազատմական կարող է իհարկե կիրառվել, սակայն այն շատ ավելի արդյունավետ կլինի, եթե այն իրականացվի ոչ միայն զուտ մարդուն մեկուսացնելու գործառույթներով, այլև համակցվի անձի ուղղման նպատակ ունեցող աշխատանքներով: Իսկ եթե առհասարակ բոլոյ է տրվում պատիժը պայմանական ազատագրվածք կրել, ապա դրա հետևանքները ավելի քիչ բացասական են, քանի որ նպաստում է աղեկվատ սոցիալականացմանը:

Այսպիսով, պրոբացիոն ծառայության ձևակորդումը կարող է իր դրական դերն ունենալ կրկնահանցագրծությունների կանխարգելման գործում, կնպաստի ընտանիքի անդամների հետ դրական

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կապի ապահովմանը, քրեական միջավայրի հետ ցիալական ապահովության և բարեկեցության բաշխման հնարավորության սահմանափակմանը, սպառապարտյալի սոցիալական պայմանների, սո-

ցիալական ապահովության և բարեկեցության բաշխման ուղղված աջակցությանը:

Գրականության ցանկ

1. Գասպարյան Ա., Հովհակիմյան Գ. Սոցիալական աշխատանքը քրեական արդարադատության համակարգում: Եր.: «Հ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, 2013. 174 էջ:
2. <http://www.osce.org/hy/yerevan/97036>
3. <http://www.justice.am/legal/view/article/556>
4. <http://www.osce.org/hy/yerevan/97036>
5. <http://www.justice.am/legal/view/article/598>
6. <http://www.justice.am/article/566>
7. <http://research.lawyers.com/glossary/probation.html>
8. <http://iravaban.net/70009.html>

Լուսին Ստեփանյան

Доцент кафедры общей психологии ЕГУ,
кандидат биологических наук

Տաթև Սիմոնյան

Магистр кафедры общей психологии ЕГУ

Արտակ Ղուլյան

Начальник учебной части ГНКО “Центр правового
образования и осуществления реабилитационных программ”

РЕЗЮМЕ

Социально-психологические особенности осужденных, подлежащих службе probation

Изучены социально-психологические особенности осужденных, отбывающих наказание в исправительных учреждениях РА. В соответствии с действующими стандартами выборка была разделена на две группы: 1-ую группу составили осужденные, не подлежащие службе probation, 2-ую группу - осужденные, подлежащие службе probation. Проведен межгрупповой сравнительный анализ социально-психологических факторов осужденных. Обнаружены значимые межгрупповые различия по социальным характеристикам осужденных, а также по выраженности психологических характеристик личности, в частности, по уровню эгоцентризма, самоконтроля и самооценки.

Ключевые слова: осужденные, служба probation, агрессивность, ригидность, коммуникативность, самоконтроль, эгоцентризм.

Lusine Stepanyan

YSU, chair of General Psychology, associate of professor, Doctor of Biology

Tatev Simonyan

YSU, chair of General Psychology, master of Psychology

Artak Ghulyan

Head of the Educational Department of the “Legal Education and Rehabilitation Programs’ Implementation Center” SNCO

SUMMARY

The socio-psychological features of convict undergoing to probation service

The socio-psychological characteristics of convicts of correctional institutions of the Republic of Armenia was studied. In accordance with current standards sample was divided into two groups: the first group consisted of prisoners who did not undergo probation service, the 2nd group - condemned to be the probation service. The intergroup comparative analysis of socio-psychological factors of convicts was conducted. The significant intergroup differences of social characteristics of convicted persons were found out. The significant intergroup differences of the psychological characteristics, in particular, the level of egocentrism, self-control and self-esteem was revealed.

Keywords: convict, probation service, aggressiveness, rigidity, communicativity, self-control, egocentrism.